

ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՀԱՅՏ ԵՐԿԵՐՆ ՈՒ ԱՆԿԱՏԱՐ ՄՏԱՀՂԱՑՈՒՄՆԵՐԸ

Ա. Մ. ԻՆՃԻՅԱՆ

Մեծ մտածողի գրական գործունեությունը տևել է հազիվ մեկ տասնամյակ՝ նրա փոթորկալի կյանքի վերջին տասնամյակը: Ասում եմ հազիվ, նկատի ունենալով, որ այդ տարիներն էլ նպաստավոր չեն եղել քիչ թե շատ տևական ստեղծագործական աշխատանքի համար՝ համալսարանական պարապմունքները նախ Մոսկվայում, ապա Պետերբուրգում, երեք ուղևորություններն արտասահման (1857, 1859, 1860—1862), ավելի քան եռամյա բանտարկությունն ու աքսորը և սրանց ուղեկցող հիվանդությունները (1862—1866):

Մ'արտնչող հրապարակախոսի համար ստեղծագործելը, գրավոր խոսքով հասարակությանն իր գաղափարներին հաղորդակից դարձնելը, հակառակորդների հետ գաղափարական մենամարտը եղել են կենսական անհրաժեշտություն: Ամենադժվարին իրադրության պայմաններում, որոնց մեջ նալքանդյանը հաճախ է գտնվել՝ Հնդկաստանի հեռավոր ճանապարհներից, մինչև իսկ Պետրոպավլովյան բերդի հաստաբեստ պարիսպների ետևից նա աշխատել է «լսելի կացուցանել» իր ձայնը:

Ստեղծագործող նալքանդյանի առջև կանգնած հիմնական խոչընդոտներից մեկը եղել է ցարական դաժան գրաքննությունը, որի մասին նա ունի մի շարք թափանցիկ ակնարկներ:

«...Իմ մտքերը կերպարանագործելու և այս մասին երկար խոսելու համար հարկավոր է ժամանակ..., — գրել է նա, — ...մանավանդ այստեղ հարմար չէր երկարաբանել... գուցե ավելորդ ևս խոսեցի...»¹: Եվ կամ՝ «Մենք թողնում ենք այդ բանի վրա խոսելը մի ուրիշ, ավելի հարմար ժամանակի»:

«Մեռելահարցուկ» վեպում իր գրական կրկնակի՝ Կոմս էմմանուելի միջոցով արտահայտելով խոսքի ազատության բաղձանքը, նալքանդյանը դրել է. «Ո՛ր էր այն երանությունը, որ հնար լիներ սրտիս վերայի եղածը դուրս տալ և թեթևանալ այն անտանելի ծանրութենից, որ ճնշում է հոգիս... բայց ի՞նչ...»²:

Նույն «Մեռելահարցուկ»-ում, մի քանի էջ հետո, կրկնելով իր հոգում կուտակված խոհերն ու զգացմունքներն ազատ արտահայտելու իղձը, նալքանդյանը տարակուսում է, թե այդ իրեն երբևէ կհաջողվի. «...Օրանի՜ թե քանի չեմ մեռած, թափեի սրտիս եղածը մեր ազգի առաջ, պատառեի մի քանի կախարդական վարագույրներ... Բայց դժվար թե հաջողի ինձ այս, և ես վա-

1 Մ. Նալքանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. I, 1945, էջ 281—282:

2 Նույն տեղում, հատ. III, էջ 183:

3 Նույն տեղում, հատ. I, էջ 278:

խում եմ, որ այն բաները, ինչ որ այժմ ճնշում են հոգիս, պիտի ճնշեն և ոսկերքս զերեզմանիս մեջ...»⁴:

Նալրանգյանը որոշակի ակնարկներ ունի նաև այն մասին, որ երբ, այնուամենայնիվ, խիղախել է ազատ ընթացք տալ իր հոգու «բխվածքին», նույն դաժան զրաքննությունը փակել է նրան լույս աշխարհ հանելու ճանապարհը. «...Ճշմարիտ է և այն,—գրել է նա,—որ շատ բան ևս չէ կախվում օրագրի հրատարակողից կամ նորա զործակիցներից. երկիրը շատ անգամ բուսուցանում է դալար ծիլեր, բայց և շատ անգամ հյուսիսի ցուրտը պաղեցնում է նորանց արևազալից առաջ...»⁵:

Նալրանգյանի կյանքի ընթացքի և նրա ապրած ժամանակի ահա այս առանձնահատուկ պայմաններով պետք է բացատրել, որ ականավոր հեղափոխական-դեմոկրատի ստեղծագործական մտահղացումներից շատերը մնալի են անկատար և մի քանիսն էլ իրականացել են միայն մասամբ:

Տարաբախտաբար, մեր ձեռքը չեն հասել Նալրանգյանի արգասավոր գրչի բոլոր արգյունքները: Նրա երեք տասնյակի հասնող տարրեր ժանրի ավարտուն կամ թերավարտ երկերը և շուրջ վեցհարյուր նամակ ղեռն չեն հայտնարելված կամ կորած են իսպառ: Դա խոշոր և անփոխարինելի կորուստ է մեր հասարակական մտքի և գրականության պատմության համար:

Նախ՝ անհայտ կամ կորած երկերի և նամակների մասին: Դրանց ցանկը մենք կազմել ենք հիմք ունենալով իր՝ հրապարակախոսի երկերի, նամակների, «ծոցատետրի», ինչպես նաև ժամանակակիցների հիշողությունների և նամակների տվյալները:

Մեր մեծագույն հրապարակախոսի գրական ժառանգության մի զգալի մասի կորստի հիմնական պատճառը քաղաքական անբարեհուսության և հալածանքի այն մթնոլորտն էր, որի մեջ անցավ Նալրանգյանի գրեթե ողջ գիտակցական կյանքը, և մահից հետո նրա անվան ու զործերի նկատմամբ երկար տասնամյակներ շարունակվող հետապնդումները:

Առայժմ մեզ անհայտ են մնում կամ կորստի են մատնված գրաքննություն արգելած երկերը, ինչպես և, հակառակ Նալրանգյանի դիմումների, նրա ձերբակալության ժամանակ բռնագրավված և չվերադարձված թղթերը: Պետրոպավլովյան բերդում գրած 117 նամակից պահպանվել են միայն 22-ը, մնացած 95-ը, ըստ Նալրանգյանի արտահայտության, բերդի պատերի մոտ «մեռելկոխ» են եղել և ապա, հավանորեն՝ ոչնչացվել: Իր հետ աքսորվալը՝ Կամիշլին տարած ձեռագրերի մի մասը ևս կորած կամ ոչնչացված պետք է համարել:

Նալրանգյանի բարեկամների մոտ գտնված ձեռագրերի և նամակների մեծ մասը կամ ոչնչացված է, «քաղաքական հանցապարտի» հետ իրենց երբեմնի կապերի այդ իրեղեն ապացույցները վերացնելու նպատակով, և կամ, դրանց տերերի մահից հետո, վերջիններիս ժառանգների անհոգության հետևանքով՝ կորստի է մատնված...

Վերոհիշյալ կորստի մյուս, ոչ նվազ էական պատճառը մեր ժողովրդի, ժույլն ազգային միավորի, կոտորակված լինելն է, ինքնուրույն ազգային պետականության բացակայությունը, հետևաբար բացակայությունը այն

⁴ Նույն տեղում, էջ 282:

⁵ Նույն տեղում, էջ 487—488:

հաստատությունների, որոնց խնդիրն է որոնել, հավաքել և պահպանել հասարակական մտքի և դրականության պատմության վավերագրերը:

Այստեղ անհրաժեշտ է հիշել, որ անցյալում այդ ուղղությամբ կատարված զգալի աշխատանքը պարտական ենք առանձին անհատների անձնվեր քանքերին, առաջին հերթին՝ բաղմավաստակ բանասեր Երվանդ Շահադիդին:

Նալբանդյանի կյանքի և գործի ուսումնասիրությունը սովետական տարիներին զբաղում է զիտական հաստատուն հիմքերի վրա: Այստեղ անգնահատելի է Աշ. Հովհաննիսյանի ծառայությունը: 1935 թ. նրա ընդարձակ մեկնաբանություններով հրատարակած Նալբանդյանի «Անտիպ երկեր» մեծածավալ հատորը կազմում է Նալբանդյանագիտության անկյունաքարը: Նա հայտնաբերեց և հրապարակեց «Սոս և Վարդիթերի» «կրիտիկան», «Էլյ xopuuo!»-ն, «Մոցատետրը», «Բերդի հիշատակարանը» և այլ երկեր, շրջանառության մեջ դրեց Նալբանդյանի կյանքը և ժամանակը լուսաբանող մի շարք կարևորագույն վավերագրեր. այդ բոլորի շնորհիվ նշանակալի չափով բնդարձակվեցին մեր իմացության սահմանները մեծանուն հեղափոխական-դեմոկրատի մասին:

«Անտիպ երկեր»-ի առաջաբանում Աշ. Հովհաննիսյանն անդրադարձել է նաև Նալբանդյանի անհայտ երկերի հարցին, ուշադրություն հրավիրել նոր պրպտումների անհրաժեշտության վրա: Պետք է խոստովանել, որ անցած երեսնամյակում քիչ բան է ավելացված հայտնաբերվածի վրա:

Նալբանդյանի մահվան 100-ամյակի առթիվ անհրաժեշտ համարելով վերստին դառնալ նրա անհայտ երկերի խնդրին, աշխատել ենք, ըստ հնարավորին, լրացնել դրանց ցանկը, ի մի բերել հայտնի բոլոր տվյալները հետագա որոնումները հեշտացնելու նպատակով:

Նալբանդյանի անհայտ երկերի ցանկը բաղմածանր է՝ բանաստեղծություն, գեղարվեստական արձակ, հուշագրություն, դրամատիկական ստեղծագործություն, հրապարակախոսական, զրաբննադատական, լեզվաբանական, բանասիրական, բնագիտական երկեր, դիցաբանություն և վերջապես՝ նամակներ:

Ստեղծագործական ձիրքը Նալբանդյանի մեջ ի հայտ է եկել դեռևս աշակերտական շրջանում. ըստ ժամանակակիցների հուշերի, տասներեք տարեկան հասակում նա բանաստեղծություններ է գրել՝ պատմական անցքերին և անձերին նվիրված: Դ. Պատկանյանի «Հիշատակարան»-ի տվյալների համաձայն, Նալբանդյանը 1845 թ. իր ուսուցչի՝ Մ. Եկենյանի հետ մրցելիս, հանպատրաստից հորինել է մի զրաբար բանաստեղծություն, որ 1851 թ. տպագրվել է «Արարատ» շաբաթաթերթում: Ինչպես հայտնի է, նույն 1851 թ. «Արարատ»-ում «Միքայել Նալբանդեանց, յաշակերտութենէ տեառն Դար. Պատկանեան ի նոր նախիջևան» ստորագրությամբ տպագրվել է շորս ոտանավոր, որոնցից երեքը՝ զրաբար. թե դրանցից ո՞րն է 1845 թ. Եկենյան վարժապետի հետ մրցելիս հորինվածը՝ հայտնի չէ, քանի որ Գ. Պատկանյանի «Հիշատակարան»-ում չի նշված ոտանավորի խորագիրը և ոչինչ չի ասված բովանդակության մասին:

Հիշյալ մրցության մասին մի փոքր այլ է Միք. Տեր-Քրիզոստյանի հաղորդածը: Երբ ներսես Աշտարակեցուն հայտնում են Նալբանդյանի բացատրությունը Մ. Եկենյանի դպրոցը հաճախելուց հրաժարվելու մասին (այլևս ոչինչ

չունի նրանից սովորելու), կաթողիկոսը պատվիրում է մի գրաբար շարադրություն գրել տալ նրան: Նախնական շարադրությունը թե՛ բովանդակությամբ և թե՛ լեզվի (գրաբար) կանոնավորությամբ կաթողիկոսին զարմանք է պատճառում: Այստեղ խոսք չկա ոտանավորի մասին: Նախնական առաջին կենսագիրը ցավ է հայտնում, որ այդ շարադրության հետ ճշատ ուրիշ այդպիսի գրավոր աշխատությունը կորած են Մոսկվա գալուց առաջ⁶:

Ինչպես պարզվում է Նախնականի 1847 թ. մայիսի 26-ին Նոր Նախիջևանի հոգևոր կառավարությանը հասցեագրած «Հայտարարություն»-ից, այդպիսի շարադրություններ մի քանիսն են եղել: Դրանցից մեկը հայտնաբերվեց և հրապարակվեց 1956 թ.⁷:

Ուշագրավ է, որ Գ. Պատկանյանին աշակերտելու շրջանում գրած շարադրություններից մեկը («Մարդեղություն Քրիստոսի») պատանի Նախնականը մտադրություն է ունեցել տպագրելու:

Նախնականի գրչի առաջին արգասիքները լինելով, այդ շարադրությունները հետաքրքրական են ո՛չ այնքան իրենց բովանդակությամբ, որ կրոնադավանաբանական է, այլ լեզվի (գրաբարի) իմացության աստիճանով և զրանց գրության հանգամանքներով (հիշյալ շարադրությունները և հարակից գրությունները, փաստորեն, կղերա-ավատական դասի դեմ Նախնականի առաջին ելույթների վավերագրերն են):

Փաղափարական հակառակորդների դեմ ապագա հրապարակախոսի պայքարի նոր շրջափուլն սկսվում է նրա Մոսկվա տեղափոխվելուց հետո: Այդ պայքարը չէր կարող չունենալ և ունեցել է իր անդրադարձումը Նախնականի ստեղծագործություններում, որոնցից, ցավոք, շատ բան չի պահպանվել: Լազարյան ճեմարանի դիրեկտոր Ա. Ի. Զելենոյի 1854 թ. հունվարի 23-ին Հովհ. Լազարյանին ուղղած գրության մեջ հիշատակվում է Նախնականի մի երգիծական գրվածքը. «...Կարճ ժամանակ Մոսկվայում գտնվելով,—հաղորդում է Զելենոյը,—ինչպես ասում են, նա (Նախնականը—Ա. Ի.) այստեղի հոգևորականության մասին գրել է սատիրա, որը քիչ էր մնում ընկներ սաների ձեռքը...»⁸: Այլ տեղեկություններ Զելենոյի հիշած «սատիրայի» մասին առայժմ չունենք: Գուցե դա մեզ հայտնի «Нѣхъ хорово!»-ն է. այս վերջինը, ինչպես ցույց է տվել Աշ. Հովհաննիսյանը, տարածված է եղել Լազարյան ճեմարանի սաների մեջ և մեծ իրարանցում առաջ բերել Նախնականի հակառակորդների շրջանում⁹, մինչդեռ «սատիրան» չի ընկել սաների ձեռքը: «Քիչ էր մնում ընկներ...» ակնարկը հիմք է տալիս հետևելու, որ Նախնականի հիշյալ երկը¹⁰ նրա ձերբակալության ժամանակ բռնադրավել և ոչնչացվել է:

Նախնականի մինչհուսիսափայլյան շրջանի չափածո ստեղծագործությունների մի մասի կորստի պատճառը եղել է նաև երիտասարդ բանաստեղծի «անհոգությունը», ինչպես ինքը խոստովանել է Հար. քահ. Գեորգևյանին հասցեագրած 1855 թ. մայիսի 12-ի նամակում: Իր բանաստեղծու-

6 Չլազար Փարպեցու գրած թուղթը, Թարգմանություն և բացատրությունը Մ. Նախնականից, Ս. Պետերբուրգ, 1868, էջ V11:

7 Միքայել Նախնական, վավերագրերի ժողովածու, 1956, էջ 3—6:

8 Հենինդրադի կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆ. 880, ցուցակ 5, 1853, թ. 7—8:

9 «Անտիպ երկեր», էջ 332:

թյունների տեսքը ի պահ հանձնելով Գեորգեյանին, նա ղեկավարվել է այդ երկերը «հավերժական կորուստի» շմատնելու ձգտումով, հարակցելով, որ՝ «մինչև այսօր իմ անհոգութենովը իմ գրած բաներից շատերը այս կամ այն կողմ ցրված կորած են, որոնց անունը ևս օր ըստ օրե մոռանում եմ»¹⁰:

Իր գաղափարական հակառակորդների դեմ մղած պայքարում Նալբանդյանն օգտագործել է գրեթե բոլոր գրական ժանրերը, այդ թվում նաև չափածո պամֆլետը:

Վերը հիշված «սատիրային» կարող ենք ավելացնել մեզ անհայտ ևս երկու երգիծական բանաստեղծություն: Դրանցից մեկի մասին տեղեկություն է տալիս Մ. Աղաբեկյանը: Նա գրում է, որ Սարգիս Եպիսկոպոս Ջալալյանի «Թիֆլիզու առաջնորդ եղած ժամանակ անվեհերն ազգասեր պ. Մ. Նալբանդյանցը «Գիրսաս» անունով նրա ոտանավոր նկարագիրն է արած, որն որ շատերին հայտնի է և այսօր էլ Ջալալյանցն ամբողջ ուսահպատակ հայոց մեջ այդ «Գիրսաս անունով է ծանոթ»¹¹:

Թերևս Նալբանդյանի անհայտ այդ չափածո պամֆլետի արձագանքն է լերմոնտովի «Իևի» տաղանդավոր թարգմանիչ Մ. Սադաթյանի «Ա՛ռ քեզ, Գիրսաս, կարդա՛ ցնծաս» երգիծական ոտանավորը, որը հրապարակվեց հետագայում, «Արևելյան մամուլ» ամսագրում¹²:

Երրորդ երգիծական բանաստեղծության մասին տեղեկանում ենք Կոմս էմմանուելի «Հիշատակարան»-ից. թեև այստեղ ասված է, թե ոտանավորն ուղարկված է Թիֆլիսից, առանց ստորագրության, սակայն, նկատի ունենալով, որ Նալբանդյանը «Հիշատակարան»-ի շատ հատվածներ տպագրել է իր մտացածին թղթակից-աշխատակիցների անունով՝ հակառակորդներին ապակողմնորոշելու մտադրությամբ, ապա միանգամայն հավանական է ենթադրել, որ հիշյալ ոտանավորի հեղինակը ևս ինքն է եղել: «Կարդացի այդ ոտանավորը,—գրում է Կոմս էմմանուելը,—և երբ կամեի արտագրել նորան «Հիշատակարանիս» մեջ, հորեղբայրս ներս մտավ: Բմ հորեղբայրը իմ գլխին ցենզորի նման մի բան է, շատ խիստ բարոյականության տեր մարդ է. ամենայն օր նայում է «Հիշատակարանիս», որ մի անպատշաճ բան չգրեմ: Թեև այդ ոտանավորը ուներ յուր մեջ անպատշաճությունք, բայց այնուամենայնիվ նորա հիմքը ճշմարտությունն էր...»¹³:

Թերևս «անպատշաճությունք» պարունակող այդ ոտանավորը հենց Մ. Աղաբեկյանի հիշատակած «Գիրսաս» չափածո պամֆլետն է, քանի որ «Հիշատակարան»-ի այն հատվածում, ուր խոսվում է ոտանավորի մասին, «Գիրսաս Բրամինապետի» անվան տակ մերկացվում է նույն ինքը՝ Սարգիս արքեպ. Ջալալյանը:

Նալբանդյանի անհայտ երկերի թվում է նրա միակ դրամատիկական գործը՝ «Կուտանք հաղարը, կրլլա բաղարը» երեք գործողությամբ կատակերգությունը: Պահպանվել է վերջինիս ինքնագրի միայն անվանաթերթը, ըստ որի այդ երկը ավարտված է եղել և նախատեսված տպագրության 1859 թ.:

10 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. I, էջ 23:

11 «Ծիլն Ավարայրի», 1867, № 3, էջ 118:

12 «Արևելյան մամուլ», 1871, № 12, էջ 282—283:

13 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. I, էջ 337:

Այս փաստն ինքնին իմաստավորվում է նշանակալի է դառնում, երբ նկատի ենք առնում, որ նույն այդ 1859 թ. հունվարին, «Հյուսիսափայլ»-ի առաջին ամսատետրակում տպագրված «Հիշատակարան»-ում ոգշունելով Մոսկվայի հայ ուսանողների առաջին թատերական ներկայացումը, երիտասարդ թատերասերներին նախազգուշանալով կոզմոսոքոչում էր գեպի ռեալիստական դրամատուրգիան: Անտարակույս, «Կուտանք հագարը, կրլլա բագարը» կատակերգության մեջ ականավոր գրողը փորձել էր մարմնավորել իր գեղագիտական իդեալը:

Նախազգուշանալի ստեղծագործական ուղու կարևոր նշանաձևերից է «Մի-նին խոսք, մյուսին հարսն» վեպը կամ վիպակը, որը դարձել է նախազգուշացիության և առհասարակ հայ գրականության առեղծվածներից մեկը: Այս երկի մասին առաջին անգամ նախազգուշանալի խոստում է 1857 թ. նոյեմբերի 7-ին Կար. Հայրապետյանին ուղղած նամակում. «Ձեզ հայտնել էի մասնավորապես, — գրում է նա, — որ չարագրել էի մի գիրք «Մինին խոսք, մյուսին հարսն» անունով, որի խորհուրդն է. ինչպես եվրոպական այգայիսի աշխատությունների խորհուրդը, բարոյական լուսավորություն և կրթություն, և որովհետև այդ բանի զխավոր նյութը առած է նախնիքանցոց կյանքից, վասնորոն և մանավանդ հասկանալի և օգտակար նախնիքանցոց համար»:

Այնուհետև, խնդրելով Հայրապետյանին և նրա բարեկամների նյութական աջակցությունը վիպակի տպագրությունը զուլի բերելու համար, նախազգուշանալի շարունակում է. «Հավաստի եմ, որ դուք չեք հրաժարվիլ այսպիսի մի ազգասիրական օգնություն մատուցանելուց, որով իմ տարևոր աշխատությունը պիտի կենդանանա ազգի համար. հավաստի եմ նույնպես, որ բավական կմնաք իմ աշխատությունից, որովհետև ամենայն մաքուր խղճմտանքով գործակատար եմ գտնված»:

Այս տողերը, ինչպես և ամբողջ նամակը վկայում են, որ նախազգուշանալի կարևոր նշանակություն է տվել իր երկին և չեղած փափագ ունեցել՝ տպագրված տեսնելու այն: «Հավատացած եմ, որ կկատարեք իմ խնդիրը» — գրում է նա, և հույս հայտնում, որ մինչև գեկտեմբերի վերջը կստանա սպասված օգնությունը՝ հունվարից վիպակի տպագրությունն սկսելու համար: Նույն նամակը հիմք է տալիս որոշելու «Մինին խոսք, մյուսին հարսն» վիպակի գրության ժամանակը: «Տալեռ» աշխատությունն արտահայտություններ այլ կերպ չի կարելի հասկանալ, քան որ այդ երկը նամակը գրելու պահին մեկ տարվա կյանք է ունեցել, այն է՝ ավարտված է եղել 1856 թ. նոյեմբերին, ուրեմն գրված պետք է լինի նույն թվականին, մինչև նոյեմբեր ամիսը:

1858 թ. մարտի 27-ին Կար. Հայրապետյանին հասցեագրած նամակում նախազգուշանալի կրկնում է վիպակի տպագրությանն աջակցելու խնդիրը: Նա հայտնում է իր մտադրությունը գործն սկսել «Թափառական հրեա»-ի առաջին հատորի հայերեն թարգմանության տպագրությունն ավարտելուց անմիջապես հետո՝ 1858 թ. ապրիլի 20-ից:

Նախազգուշանալի այնքան վստահ է եղել իր նախնիքանյան բարեկամների օգնության վրա, որ գեոեա «Հյուսիսափայլ»-ի 1858 թ. հունվարի ամսատետրակում տպագրված «Հանգես նոր հայախոսություն» առաջին հատորի «Կրիտիկայում» խոստում է «Մինին խոսք, մյուսին հարսն» վիպակի, որպես «այժմուս տպի տակ եղած գործի» մասին¹⁴: Ճիշտ է, «Հյուսիսափայլ»-ի առաջին

¹⁴ Նույն տեղում. հատ. II, էջ 142.

ամսաանարակր յայն անոով ունացումով, մարտին, ապրիլին, ինչպես նայն մարտի 27-ի նամակից անուանր. եւ զեւ չէր սաացել իր գործի ազագրութիւնն սկսելու համար անհրամենչա տարծաթրս:

«Հյուսիսափայլո-ի առաջին ամսաանարակից մի փոքր ավելի ուշ, հաճանորեն 1858 թ. ապրիլին յայն անոամ «Քափառական հրետո-ի յապիկի վերջին երեսին, «Պրյանր, որ գտանվում են ազագրական մամուլի տակ» ծանուցման մեջ կարգում ենր. «Միևին խոսր, մյուսին հարսն, գործ Մ. Նալրանգյանց, որի նյութր առած է հայերի կյանքից»:

«Հյուսիսափայլո-ի իններորդ ամսաանարակի «Հիշատակարան»-ում թվարկելով «ժողովրդական բնտիր լեզվով» ազագրված և ազագրվող գրքերի անունները, Նալրանգյանն ավելացնում է, որ գրանցից «միայն երկուրր («Պազլոս և Վերդիներ» և «Միևին խոսր, մյուսին հարսն») գտանվում են ազագրական մամուլի տակ»¹⁵:

Այնուհետև, այդ երկի մասին «չ «Հյուսիսափայլո»-ում և «չ Նալրանգյանի մեր ձեռքը հասած նամակներում որեւէ հիշատակութիւն չենք հանդիպում: Անաարակայն է միայն որ վիպակի ազագրութիւնն ավարտվել է մինչև 1858 թ. վերջը»¹⁶:

Բայց բնշու, այնուամենայնիվ, Նալրանգյանի երկր յայն շահումով, հրապարակ չհանվեց: Այն հարցին Սա. Նազարյանը ավել է հակիրճ. բայց բնով ոչ ազատիչ իր պատասխանը 1867 թ. ապրիլի 3-ին Հովհ. Հովսեփյանին եւ գրում է. «Միևին խոսր, մյուսին հարսն» առած գործը հանգուցյալ Նալրանգյանի մինչև որո կայած ու կաշկանդված մեացել է ազարանում, որովհետև հեղինակը չկամենցավ գորան հրապարակ տալ, ուրեմն և սաանայ կարելի չէ գորան»¹⁷:

Այդպիսի որոշում կայացնելու համար, անշուշտ, Նալրանգյանը յուր պատճառներ է ունեցել, որոնք մեզ համար ցարզ մնում են անհայտ: Մի ազոա հաճանականութիւն կա ենթադրելու, որ հեղինակը չի ցանկացել իր վիպակը հրապարակ հանել, եկատի առնելով այնտեղ արտացոլված ինքնակենսագրական որոշ եզրկութիւններ, որոնք կարող էին հայանի գառնայ ժամանակակից բնթերցողներին: Նալրանգյանի վիպական կենսագրութիւն մեջ Ռ. Բերրերյանը հիմնվելով իր հոր՝ հրապարակախոսի մտերիմ բնկեր Հովհ. Բերրերյանի հիշողութիւնների վրա, պատմում է, թե Նալրանգյանը «Միևին խոսր, մյուսին հարսն» վիպակը գրելու մասհցացումն ունեցել է 1853 թ. Մոսկվայում, եւր Նախիջևանից եկած ծանոթներից յանյով, որ իր «իրած ազդիկը (Վարդուհի Սրապյան), ամուսնացել է մեկ ուրիշի հետ: Սակայն մեկ տարի անց, չարունակում է Ռ. Բերրերյանը, «եւր արգեն անցել էր գառն ժամերի ազավորութիւնը, եւ հիմնովին փոխեց գրրույկի եպատակր»:

Նալրանգյանի կյանքի այն գրվագը եկատելի չափով առնչակցվում է երա վիպակի հիմնական սյուժետային գծին: Թվում է հաճանական, որ այդ հանգամանքը կարող էր լինել հիշյալ երկը հրապարակ չհանելու ոչ անհիմն պատճառներից մեկը:

¹⁵ Նույն անգում, հատ. 1, էջ 267:

¹⁶ Ծ. Հաճադդը («Միևին շաղարյան Նալրանգյան», էջ 124) և Լեւոն («Թուստոյոց գրականութիւն», էջ 166) Նալրանգյանի վիպակի ազագրութիւն ժամանակը համարում են 1857 թ., որ, ինչպես ցայց են տալիս վերը բերած փաստերը, հիշա չէ:

¹⁷ Գրանանութիւն և արվեստի թանգարան, Մկ. Բալիւզարյանի արիթիվ, 36, 276:

Այնուամենայնիվ, մինչև վիպակի ամբողջական տեքստի, ինչպես նաև նրա ստեղծագործական պատմության վերաբերյալ հավաստի վավերագրերի հայտաբերումը խնդիրը լուծված համարել չի կարելի:

Ինչ էլ եղել «Մինին խոսք, մյուսին հարսն» վիպակի հետագա ճակատագիրը: Ինչպես տեսնվեց Ստ. Նազարյանի նամակից, 1867 թ., Նալբանդյանի մահից մեկ տարի հետո, վիպակի տպագրված օրինակները պահվելիս են եղել տպարանում: Այս հանգամանքը մի փոքր տարակուսանք է հարուցում, եթե հիշենք, որ գրքի տպագրությունից անցել էր շուրջ ինը տարի. բացառիկ մի բան է այդքան ժամանակ տպարանում կապկապած պահել տպագրած մի գրքի ողջ տպաքանակը (թեկուզ և վերջինս լիներ 500 կամ 1000 օրինակ): Թերևս Նալբանդյանի բարեկամները սպասել են, որ հեղինակը ժամանակի ընթացքում կփոխի իր որոշումը և թույլ կտա իր երկր հրապարակ հանել: Իժմախտաբար, այդ տեղի չի ունեցել, և Նալբանդյանի մահից հետո նրա մերձավորները, չկամենալով հանգուցյալի կամքին ընդդեմ գնալ, հավանաբար ոչնչացրել են վիպակի տպաքանակը, որից մի քանի օրինակ, այնուամենայնիվ, մնում է հեղինակի ընկերների, այդ թվում նաև Հովհ. Բերբերյանի մոտ: Վերջինիս որդին՝ Թ. Բերբերյանը, հոր գրադարանում տեսել և կարդացել է այդ գիրքը: Նալբանդյանի կյանքի և գործի բազմամյա հետադոտողներից Ն. Շահադիզը վիպակի բովանդակության մասին տեղեկություններ քաղել է Դր. Սալթիկյանից, որի մոտ նույնպես, հավանորեն, եղել է վիպակի մի օրինակը:

Լեոն իր «Ռուսահայոց գրականությունը» գրելիս ձեռքի տակ ունեցել է Նալբանդյանի վիպակը (ի դեպ, վերջինս այդ գրքում, ըստ իս, չի արժեքավորված): Ե. Շահադիզի հարցումին պատասխանելով, նա 1903 թ. նոյեմբերի 17-ի նամակում գրում է. «Նալբանդյանի վեպը ես չունեմ. տարիներ առաջ կարդացել էի Բաքում. հիշողությանս վրա հիմնված գրեցի մի քանի տող նրա մասին: Այդ գիրքը, ինչպես և «Երկրագործությունը», «Երկու տողը» ես ստացել էի այժմ հանգուցյալ Ներսես Դավթյանից, որ չգիտեմ որտեղից էր ձեռք բերել»¹⁸: Հետագայում, 1916 թ. Նալբանդյանի մահվան 50-ամյակի առթիվ տպագրած հոդվածում կրկին անդրադառնալով այդ խնդրին, Լեոն գրում է. «Այս վեպը այժմ միանգամայն հազվագյուտ է: Ինձ մոտ կա նրա, տարաբախտաբար, ոչ ամբողջական արտատպությունը Կ. Պոլսի «Մեղուի» մեջ»¹⁹: Նոր տարակուսանքներ է հարուցում Նալբանդյանի վիպակի մի հատվածի արտատպությունը Հ. Սվաճյանի «Մեղու» հանդեսում (1871 թ., № 56): Նախ՝ բաց է թողնված վիպակի առաջաբանը, ուր, ինչպես հայտնի է «Հանդես նոր հայախոսության» առաջին հատորի «Կրիտիկայից», Նալբանդյանն արժարժել էր աշխարհաբարի զարգացման հարցերը: Այդ մասին Սվաճյանի երկտող ծանոթության մեջ ոչինչ չի ասված: Եվ ապա՝ վիպակի արտատպությունը, մեզ անհայտ պատճառներով, ընդհատվել է:

Այս եզրակացության հիմքը հետևյալն է:

«Մինին խոսք, մյուսին հարսն» վիպակի առաջին գլխի մի հատվածի արտատպությունը պարունակող «Մեղու»-ի № 56-ին հաջորդող հինգ համարները պակասում են հանդեսի՝ մեկ ձեռքը եղած կազմում: № 62-ից այլևս վիպակի արտատպությունը չի շարունակվում: Անհնարին է կարծել, որ փոքրագիր հան-

¹⁸ Գրականության և արվեստի թանգարան, Ս. Շահադիզի արխիվ, № 42ա:

¹⁹ «Հորիզոն», 1916, № 72:

դեսի հինգ համարներում այն ավարտված լինի: Ընդհատման փաստն ակնհայտ է, սակայն պատճառները մեզ առայժմ անհայտ են: Թեկուզ մոտավոր կռահումներ անելու հիմքերը բացակայում են:

Նալբանդյանի այդ երկի հայտնաբերման ուղղությամբ պրպտումները (որոնք ցայժմ արդյունավետ չեն եղել) պետք է շարունակել ամենայն եռանդով և հետևողականությամբ, ո՛չ միայն այն պատճառով, որ մեծ հեղափոխական-դեմոկրատի յուրաքանչյուր սողը արժանի է դրան, այլև նրա համար, որ «Մինին խոսք, մյուսին հարսն» վիպակը Աբովյանի անմահ «Վերք»-ի և Պռոշյանի «Սոս և Վարդիթեր»-ի հետ կազմում է մեր նոր վիպագրության հիմքը:

Ականավոր հրապարակախոսի անհայտ երկերից նշանակալի է օրագիրը. ուր նա, գիտակցական կյանքի սկզբից, օր-օրի արձագանքել է ժամանակի իրադարձություններին: Տարրեր առիթներով Նալբանդյանը վկայակոչում է իր այդ երկը, անվանելով այն մերթ «Օրագրություն», մերթ «Հիշատակարան» կամ ուղակի՝ «Մեր տեսածն ու լսածը»:

Առաջին անգամ օրագրի մասին նա հիշատակում է «Հյուսիսափայլ»-ի նոյեմբերի ամսատետրակում տպագրված «նամակ առ հրատարակողը» հայտնի հոդվածի մեջ, որը մեծ իրարանցում առաջ բերեց հակառակորդների բանակում և քիչ մնաց «Հյուսիսափայլ»-ի խափանման առիթ հանդիսանար: Հասարակության ուշադրությունը հրավիրելով երբեմնի վիճակավոր առաջնորդի բարձր հովանավորությամբ խալիբյանի կողմից կատարված ղեկավարությունների վրա և խոստանալով վերջիններս հաստատող վավերագրերը հրապարակել «գուցե մի այլ ժամանակ, բոլորովին այլ հանգամանքների մեջ», Նալբանդյանը շարունակում է. «Այո՛, մենք խոստանում ենք այդ, եթե հաջողի մեզ տպագրական մամուլի տակ ձգել մի ժամանակ «Մեր տեսածն ու լսածը», որ բովանդակում է յուր մեջ մեր աղգի ժամանակակից ձիշտ պատմություն»²⁰:

Նույն հոդվածում նա կրկին անդրադառնում է իր օրագրի հրատարակության հարցին. «Զկամիմ այստեղ երկարաբանել... այդ բաները կտեսանե ազգը այն մեր աշխատության մեջ, որ հիշեցինք մի անգամ այս նամակումս...»²¹:

«Հյուսիսափայլ»-ի 1859 թ. առաջին ամսատետրակում տպագրված Կոմս էմմանուելի «Հիշատակարան»-ի մի ականարկը հիմք է տալիս հավաստելու, որ Նալբանդյանն օրագրային իր գրառումներն սկսել է գիտակցական կյանքի սկզբից, մինչև Մոսկվա տեղափոխվելը: Նշելով, որ վիճակային կենտրոններում «աղգային լուսավորությանը գործակից» հոգևորականներ իրեն հայտնի չեն, ավելացնում է, թե հակառակն ապացուցող շատ փաստեր «վաղուց արդեն շտեմարանված են հին տարիների «Հիշատակարաններիս» մեջ»²² (ընդգծումն իմն է—Ա. Ի.):

Կարևոր է նշել, որ այդ օրագիրը, որի էջերում Նալբանդյանը գրի էր առնում ժամանակի եղելություններն ու իր խոհերը, ստեղծագործական ատաղձ է մատակարարել Կոմս էմմանուելի «Հիշատակարան»-ին: Վերջինիս հատվածներից մեկում, ի դեմս բեղղաղեի, մերկացնելով մոսկովարնակ մի մեծահարուստ վաճառականի խարդավանքները, Նալբանդյանն ավելացնում է, որ եթե

²⁰ Մ. Նալբանդյան, Երկերի իրակատար ժողովածու, հատ. II, էջ 267:

²¹ Նույն տեղում, էջ 271:

²² Նույն տեղում, հատ. I, էջ 393:

«մի տեսակ մարզերի օրագիրքը կամ լրագիրքը արդարացնեն» նրան, ապա իներ սուրբ պարտականություն կհամարի նրանց առջև դնել Բեզգաղեի «լիակատար վարքագրությունը, նորա գործած քառասուն հրաշքների պատմությունը հանդերձ, որոնց յուրաքանչյուրքը յուր ժամանակին ընկած են օրագրությանս մեջ»։ «Հիշատակարանս» — շարունակում է Կոմս էմմանուել-Նալբանդյանը, — հատված են այդ րեդիանուր և մանրամասն օրագրությունից, ուր ամենայն օր, րվով և համառով գրում եմ տեսածս և լսածս»²³ (ընդգծումն իմն է—Ա. Ի.)։

Նալբանդյանի օրագրի առնչակցությունը Կոմս էմմանուելի «Հիշատակարան»-ի հետ արտահայտված է վերջինիս խորագրում՝ «Հիշատակարան Կոմս էմմանուելի օրագրության քերթերից»։

Ուշագրավ է, որ Նալբանդյանը «նրկու տող»-ն ավարտում է «մեր տեսածն ու լսածը» հրատարակելու խոստումով. «Առայժմ միջոց չունինք ուրիշ բան ասելու. առայժմ հերիքանում ենք երկու առիթով,— գրում է նա— Բայց մեր տեսածն ու լսածը մեր հետ զերեզման շտանելու խոստումը, առնում ենք հրատարակելու։ Ընթերցող հասարակությունը կարող է հավատ ընծայել մեր խոստմունքին, մանավանդ եթե հիշե, որ ոչ երբեք զանցառու եղանք մինչև այժմ կարելի հրատարակությունների մասին»²⁴։

Դժբախտաբար, Նալբանդյանի կյանքի հանգամանքներն այնպիսի ընթացք ստացան, որ նա ի վիճակի չեղավ կատարելու իր խոստումը, և շատ կարևոր այդ երկը, որ բովանդակում էր հեղինակի իսկ բնորոշմամբ՝ «մեր ազգի ժամանակակից ճիշտ պատմությունը», մնաց անտիպ և թերևս մատնվելով անդարձ կորստի...

Մի վերջին անգամ Նալբանդյանն իր օրագիր-հիշատակարանին անդրադառնում է Պետրոպոլիտիայան բերդում։ 1863 թ. ապրիլի 8-ի նամակում, որը թարգմանաբար, մասնակի կրճատումներով, Միք. Տեր-Գրիգորյանը տպագրել է Ղազար Փարպեցու «Թղթի» սկզբում գրված Նալբանդյանի կենսագրության մեջ, կարդում ենք. «...Մի օր գուցե Աստծու աջողկույով հիշատակարանս կարգի կրերեմ և կտպեմ ուշադրության արժանի շատ տեղեկությունք և դիտողությունք մեր ցիր ու ցան եղած հայերի մասին...»²⁵։ (Ի դեպ՝ նամակի բնագրում այդ տողերը բացակայում են։ Բանտում, թղթի սակավության պատճառով, Նալբանդյանն, ինչպես ականարկում է, երբեմն նամակները կամ դրանց հավելումները գրել է առանձին թերթիկների վրա. հավանական է, որ հիշյալ տողերը պարունակող թերթիկը ևս բազմաթիվ այլ նամակների հետ մեր ձեռքը չի հասել)։

«Երեդի հիշատակարանը» պետք է համարել Նալբանդյանի «Օրագրի» վերջին գրվազը, որ և մեծ հեղափոխական-դեմոկրատի կարևորագույն այդ երկի միակ պահպանված հատվածն է...

Նալբանդյանի անհայտ երկերի մի զգալի մասը հոդվածներ և հրապարակական նամակներ են։ (Ի դեպ, նկատենք, որ ազանավոր հրապարակախոսը հաճախ էր օգտագործում Կոմս էմմանուելին կամ «առ հրատարակողը» հասցեագրված նամակաձև հոդվածների ժանրը, որոնք, տարբեր ծածկանուններով, տպագրվում էին առանձին կամ Կոմս էմմանուելի «Հիշատակարան»-ում)։

²³ Նույն տեղում, էջ 450։

²⁴ Նույն տեղում, հատ. III, էջ 37։

²⁵ «Ղազար Փարպեցու գրած բուդթի», էջ 1111։

Մեզ անհայտ հոգիվածները և հրապարակախոսական նամակները դրված և տուգանված լինելով գերազանցապես 1859 և 1860—1862 թթ. ուղևորությունների ընթացքում, հավանաբար, կամ չեն հասել հասցեատիրոջը, կամ գրաքննության արգելքով չեն տպագրվել: Հնարավոր է, որ դրանցից մի քանիսն էլ, տպագրված լինելով այլ ծածկանուններով, դեռևս չեն հայտնաբերված (Նալբանդյանի ծածկանունները բացելու գործում Աշոտ Հովհաննիսյանին հետևելով, դրական արդյունքների հասան նշ. Մուրադյանը և Աս. Ասատրյանը. այս ուղղությամբ պրպտումները շարունակելով հանդերձ, պետք է զգուշանալ առաջադիմական գաղափարներ արծարծող ամեն հոգիված Նալբանդյանին վերագրելու գայթակղությունից):

Ճանապարհորդական ծոցատետրում Նալբանդյանը նշել է բացի «Հյուսիսափայլ»-ից, նաև «Արևմուտք», «Մեղու» և «Կոունկ հայոց աշխարհին» պարբերականներին ուղարկած իր հոգիվածները և հրապարակական նամակները²⁶: «Արևմուտք»-ին ուղարկված հոգիվածներից հետաքրքրական է «Բողոքը», որը Նալբանդյանը հավանորեն գրել է առաջադիմական այդ հանդեսի լիբերալ հրատարակիչների դեմ, որոնք չբաժանելով խմբագրի արմատական գաղափարները, դադարեցրել էին իրենց նյութական աջակցությունը և դրա հետևիվանքով «Արևմուտք»-ի հրատարակությունն ընդհատվել էր: Դրանով պետք է բացատրել, որ Ստ. Ոսկանը հնարավորություն չունեցավ տպագրելու Նալբանդյանի 1859 թ. մայիսի 27 (հունիսի 8)-ին բնութագրող իրեն ուղարկված երկու նամակը (Ծոցատետրում նշված է՝ «Ոսկանյանին երկու նամակ տպելու»): Ուշագրավ է, որ Նալբանդյանի մի ծավալուն հոգիվածը, գրված Վարչավայում 1859 թ. ապրիլի սկզբներին, գրաքննության արգելքներին հանդիպելով, Ստ. Նալբանդյանը վերադարձրել էր հեղինակին՝ «Արևմուտք»-ում տպագրելու համար²⁷: Հոգիվածն արդյոք հասել է Նալբանդյանին, որ այդ ժամանակ լոնդոնում էր, թե՛ կորել է ճանապարհին՝ հայտնի չէ:

Իր մերձավոր աշխատակցի այդ երկը, որ Նալբանդյանը բնութագրում է որպես մի «գեղեցիկ և զորավոր ճառ», «հինգ թերթ տպած» (հինգ տպագրական մամուլ ծավալով), պատասխանն էր հալիբյան վարժարանի սան Ստ. Պալասանյանի, որը «Մեղու Հայաստանի» լրագրում հանդես էր եկել հալիբյանի պաշտպանությամբ:

Անշուշտ, դա Նալբանդյանի փայլուն հրապարակախոսական ելույթներից էր, թերևս ամենածավալունը՝ նոր Նախիջևանի հասարակական հոսանքների պայքարին նվիրված նրա երկերից:

Հայտնի է, որ Հ. Սվաճյանի «Մեղու» հանդեսում Նալբանդյանը Կալկաթա գնալիս և վերադարձին, Կ. Պոլսում եղած միջոցին, տպագրել է երեք հոգիված՝ «Հրաշափառ խայտառակություն», «Նամակ «Մեղուի» խմբագրին» և «Ազգային թատրոն Պոլսի մեջ»: Ծոցատետրի գրառումներում նշված է, որ «Մեղու»-ին ուղարկել է 12 հոգիված (չհաշված Հ. Սվաճյանին հասցեագրված նամակները): Անկասկած, դեռևս անհայտ այդ հոգիվածները, ինչպես և նամակները (վերջիններից Սվաճյանը միայն մեկն է տպագրել) արծարծում էին ժամանակի այն հրատապ խնդիրները, որոնք գտնվում էին մեծ հեղափոխա-

²⁶ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. IV, էջ 261—272:

²⁷ «Մուրճ», 1902, № 5, էջ 131:

կան-ղեմոկրատի և նրա արեմտահայ զաղափարակիցների հասարակական շահագրգռությունների ոլորտում:

Դժվար է կոահումներ անել, թե առարկայորեն ի՛նչ հարցեր էր շոշափում «Կոունկ»-ին ուղարկված հոգվածը, սակայն, ինչպես բաղմաթիվ այլ տվյալներ, այս փաստը ևս վկայում է, որ Նալբանդյանը աղատագրական շարժման մեջ ազգի ընդհանրական մասնակցությունն ապահովելու ելակետն ունենալով, ձգտում էր համախմբել հասարակական բոլոր կենսունակ ուժերը և ընդգիծադիր տարրերը:

Նալբանդյանի անհայտ հրապարակախոսական երկերի թվում պետք է հիշատակել նաև «Մխիթար Սերաստացի և Մխիթարյանք» հոգվածի վերջին մասը: Այս երկի անավարտ լինելու մասին եղած կարծիքը, որ ընդունված է Նալբանդյանի երկերի գիտական հրատարակության ծանոթագրություններում ևս՝ ճիշտ չէ: Մեր այս պնդումի հիմքն այն է, որ հեղինակն ինքը 1858 թ. սեպտեմբերի 1-ին Կ. Հայրապետյանին ուղղած նամակում, խոսելով հակառակորդների դեմ միացյալ ուժերով պայքարը շարունակելու անհրաժեշտության մասին, գրում է. «Իհարկե, կարդացած կլինեք Մխիթարյանց մասին գրածս. նույնների տետրակի մեջ կկարդաք վերջը և կտեսնեք բանի զորությունը»²⁸: Սակայն, ինչպես ակնհայտ երևում է, «Հյուսիսափայլ»-ի 1858 թ. նույնների ամսատետրակում հոգվածի տպագրությունը չի ավարտվում. այն ընդհատված կարող է լինել արտաքին միջամտության հետևանքով:

Նալբանդյանի անհայտ երկերից է նրա մի գրախոսականը Ոսկան Տեր-Հովհաննիսյանի հրատարակած «Նոր քնար Հայաստանի» մատենաշարի շորորող տետրակի մասին, որն ամփոփում է Մաղաթ Պետրոսյանի (Սեյաղ) աշուղական ոտանավորները:

«Հյուսիսափայլ»-ի 1858 թ. հինգերորդ ամսատետրակի «Հիշատակարան»-ում Շահրեզ-Նալբանդյանը խոստանում է «հետևյալ փոստայով» ուղարկել այդ գրքից ստացած իր տպավորությունը: «Հյուսիսափայլ»-ի հաջորդ ամսատետրակի «Հիշատակարան»-ում կարդում ենք. «Ահավասիկ կատարում եմ իմ խոստմունքս. այս նամակիս հետ ուղարկում եմ մի փոքր տետրակ, որի մեջ գրել եմ իմ դատողությունը պ. Հովհաննիսյանի «Նոր Քնարի» և առհասարակ ազգային երգ անունով աշուղների գրած կամ ասած բաների վերա ընդհանրապես, իսկ դույն այդ «Քնարի» շորորող տետրակի և մանավանդ նորա հառաջարանի վերա մասնավորապես»²⁹: Ուշագրավ է հրատարակողի, այն է՝ Ստ. Նաղարյանի ծանոթությունը. «Հետևյալ ամսատետրակներից մինի մեջ կհրատարակենք պ. Շահրեզի դատողությունը մեր նկատողությամբ հանդերձ՝ այդ դատողության վերա»³⁰: Այստեղից պարզ հետևում է, որ Նաղարյանն առարկություններ է ունեցել՝ Նալբանդյանի գրախոսականում արժարժված հայացքների նկատմամբ: Այնուամենայնիվ հոգվածը չտպագրվեց, և դրա պատճառը կամ գրաքննության արգելքն է և կամ այն, որ խմբագրի և նրա գլխավոր աշխատակցի միջև փոխադարձ համաձայնություն չի կայացել: Տարիներ անց, 1863 թ. ապրիլի 12-ի նամակում, անդրադառնալով Սեյաղի երգերին, դրանք համարում է «անպետք ոտանավորներ» («Дрянные стихи»)³¹, և, անտարա-

²⁸ Մ. Նալբանդյան, երկերի լիակատար ժողովածու, հատ. IV, էջ 52:

²⁹ Նույն տեղում, հատ. I, էջ 327:

³⁰ «Հյուսիսափայլ», 1858, № 6:

³¹ Մ. Նալբանդյան, երկերի լիակատար ժողովածու, հատ. IV, էջ 190:

կույս, այդպիսին է եղել նաև նրա մերժված գրախոսության եզրակացությունը:

Նալբանդյանի բանասիրական-հայագիտական երկերից մեզ անհայտ է մնում «Կիրակոս Գանձակեցի» հոգվածը, որի մասին Միք. Տեր-Գրիգորյանը գրում է, թե «մենք չենք կարդացել և չգիտենք ի՞նչ բան է: Այսքանը դիտենք, որ դա մի ուսումնական հայի մոտ անկորուստ պահված է»³⁰:

«Ասվում է լսվելու համար» խորագիրը կրող աշխատությունից տեղեկանում ենք, որ Նալբանդյանը, հավանորեն 1857—1858 թթ., մանուկների համար աշխարհարար լեզվով գրած է եղել հունական դիցաբանությանը նվիրված մի երկ, որ առաջօր նույնպես անհայտ է: Դատելով «Ասվում է լսվելու համար» խորագրի տակ դրված «Հառաջաբան» ենթավերնագրից, ենթադրել ենք, որ դա, թերևս, նույն հունական դիցաբանության առաջաբանն է³¹:

Բեղմնավոր գրողի երկերից մի քանիսն էլ, որ հայտնի պատճառներով՝ մնացիլ են անավարտ՝ բնավ չեն պահպանվել կամ մեր ձեռքն են հասել հատվածաբար: Իրանցից է Աստվածաշնչի հայերեն թարգմանության ուսումնասիրությունը, որը Նալբանդյանը ձեռնարկել է 1860 թ. մայիսի սկզբներին: Առիթը հանդիսացել է Ստ. Նաղարյանի «Հայ ազգի լուսավորության, կամ սուրբ թարգմանիչների դարը», որտեղ այն կարծիքն է հայտնված, թե «Հայոց Աստվածաշունչ գրքի թարգմանությունը մի մարդու աշխատության վաստակ չէ», և որպես ապացույց նշված է «ոճի անհավասարությունը», ինչպես նաև «շատ օտար ոճերի» առկայությունը: «Հայոց գիտությունը,—ավելացնում է Նաղարյանը,—միայն թե մի օր բացվեին դորա դրունքը,—այս խոսքերս ասում ենք պարտք դնելով այն կարող մարգերի հոգու վերա, որ ունեին ձեռքումը հնարք հառաջացնելու այդ գործը,—մի օր վկայությամբ կհաստատեն մեր ասածները, որ մինչև այսօր ուրանում է մի դանդաղ-կոտ և դյուրասեր տգիտություն»³²: Նալբանդյանն ընդունում է այդ հրավերը: 1860 թ. մայիսի 1-ին Մ. Փանյանին ուղղած նամակում հայտնում է, որ գրում է մի հոգված «քննելով մեր Աստվածաշունչի թերությունքը»: Վերջիններս նա վերագրում է հունական բնագրին, նշելով, որ դա «72 թարգմանչաց գործ չէ, այլ կցկտուր հավաքածո ասորական կամ այլ հունական թարգմանությունների, որ Որոգինեսը III դարում քարշքարշելով այս ու այն տեղից, բան է շինել և մերայինք թարգմանել են V դարում»³³: Ըր ուսումնասիրության համար վերոհիշյալ նամակում նա խնդրում է ուղարկել Աստվածաշնչի 1857 թ. Կ. Պոլսում հրատարակված հայերեն նոր թարգմանությունը, որ կատարված է երբայական բնագրից:

Զբաղված լինելով համալսարանական քննություններով, ապա և Հընդ-կաստան կատարելիք ուղևորության պատրաստություններով, Նալբանդյանը հնարավորություն չունեցավ շարունակելու իր հետազոտությունը և սա մնաց նախնական փուլում: Ե. Շահազիզը նշում է, որ Նալբանդյանի թղթերի մեջ եղել են Աստվածաշնչի համեմատության նյութերը, որոնք, սակայն, նույնպես չեն պահպանվել: Անհայտության մեջ են մնում նաև նյութերն այն աշխատու-

32 «Ղազար Փարպեցու գրած թուղթը», էջ XXII:

33 «Միքայել Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրությունը», էջ 321:

34 Ստեփանոս Նաղարյանի երկերը, հատ. I, 1913, էջ 180:

35 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. IV, էջ 74:

թյան, որի մասին շատ ընդհանուր ձևով նախադրյանը գրում է 1863 թ. ապրիլի 14-ի նամակում. «Ես նյութեր եմ պատրաստում ֆիզիկո-ֆիլոսոֆիական, պատմա-աշխարհագրական մի մեծ աշխատության ներածության համար, մի բան, որ ղեռնս բոլորովին չի եղել... Դրանով ես պարտական եմ Քոքլին: Ես նրանից սովորեցի: Բայց այդ նյութերն ինձ մոտ ղեռնս բաժան-բաժան են, որովհետև գրում եմ յուրաքանչյուր թեզի մասին առանձին: Լյստեղ այդ նյութերն ընդհանրացնել չեմ կարող և հնարավոր էլ չէ՝ նախքան աշխատանքն ավարտելը և նախքան իմ ազատվելը»³⁶:

Ջզալի կորուստներով է մեզ հասել Նախադրյանի «Մեր լեզվի արմատական բարեփոխության փորձ» կամ «Տեսություն նոր լեզվի մշակության» աշխատությունը, որին ինքը հեղինակը շատ կարևոր նշանակություն է տվել: Ըստ նախագծված ծրագրի, այն պետք է ունենար հետևյալ երեք մասերը՝ ա) «Ներածություն» (15 տպ. մամուլ), բ) «Համեմատական քերականություն» (10—15 տպ. մամուլ) և գ) Բուն քերականությունը (8—10 տպ. մամուլ): այսպիսով, ամբողջ աշխատությունը կազմելու էր 33—40 տպագրական մամուլ ծավալով մի ստվար հատոր: Նախադրյանը ենթադրում էր այս երեք մասերի ամբողջական հրատարակությունից հետո երրորդ մասը (նոր լեզվի քերականության գրական շարադրանքը) տպագրել առանձին, որպես ձեռնարկ բոլոր հայկական դպրոցների համար:

Նախադրյանն այդ գործը ձեռնարկել է մեծ ոգևորությամբ. «...Չէ՛ որ պետք է աշխատել,—գրում է նա 1863 թ. մայիսի 1-ի նամակում.—թող արիստոկրատները ձեռքերը ծալած նստեն, իսկ մենք կոշված ենք աշխատելու...»: Այն փաստը, որ ապրիլ ամսվա ընթացքում գրել է 15 տպագրական թերթ (մամուլ), ցույց է տալիս, թե ուժերի ինչպիսի՜ լարումով է նա աշխատել: Սակայն բանտային պայմաններում աշխատանքի այդ ինտենսիվությունը հնարավոր չէր պահպանել քիչ թե շատ տևական ժամանակով: Նա լիովին գիտակցում էր, որ իր ձեռնարկած աշխատանքը «մի վերին աստիճանի ծանր գործ» է. «Չգիտեմ, կհաջողվի՞ արդյոք ինձ շուտով այդ ծրագիրն իրականացնելու հնարավորություն ստանալ, այնուամենայնիվ, վաղ թե ուշ, ես կկատարեմ այն, եթե միայն չմեռնեմ»,—գրում է նա, իր աշխատանքի ծրագրերը շարադրելիս³⁷: Եվ ապա, հաջորդ նամակներից մեկում՝ «Ես մտադիր չեմ ավարտելու այդ գործը բանտարկության մեջ, և անկարելի էլ է, բայց նա անպայման կավարտվի իմ ազատվելուց հետո, իսկ թե ե՛րբ՝ այդ ևս չի կարելի ասել, որովհետև զժվար խնդիր է»³⁸:

Հետզհետե ծանրացող հիվանդությունը, նաև նման աշխատության համար անհրաժեշտ բաղմամբիվ նյութերի պակասը դանդաղեցնում են գործը, ապա իսպառ կասեցնում: «Մի քանի օրից ես կհասնեմ այն կետին,—գրում է նա 1863 թ. հունիսի 6-ի նամակում,—ուր և խարխալ պետք է ձգեմ, որովհետև այս ղեպքում ինձ հարկավոր կլինեն համարյա այն բոլոր գրքերը, որ մեր գրականության մեջ երևացել են մեր պատմության, գրականության պատմության, եկեղեցական պատմության մասին և շատ ուսերեն և ևլրոսական լեզուներով գրքեր: Մինչ այժմ գրածս մոտ 15 տպագրական թերթ էլ և՛ 8⁰, բայց

36 Նույն տեղում, էջ 294:

37 Նույն տեղում, էջ 190:

38 Նույն տեղում, էջ 216:

հաղիվ կաղմի ներածության կեսը և բերականության րառորդը: Պանթոթություններ դեռ բնավ չեմ գրել, որովհետև ձեռքիս տակ գրքեր չունեմ... Քերականության վերլուծական մասը սկսած էլ չի և այն չի կարելի այստեղ մշակել առանց նյութերի... հաճախ հիշողությունս հրաժարվում է օգնելուց և շատ բնական է, որ անհնարին էլ է պահանջել նրանից»³⁹:

Եթե ավելացնենք նաև, որ նա զուգահեռաբար գրում էր «Սոս և Վարդիթեր»-ի «կրիտիկան», «Քաղվածք և մտածությունք»-ը (Հայմի «Հեղելը և նորա ժամանակը» գրքի առթիվ), «նկատողություն», «Ազգային թշվառություն» հոդվածները՝ միանգամայն պարզ կլինի, թե ինչո՞ւ հնարավորություն չունեցավ ավարտելու «Մեր լեզվի արմատական բարեփոխության փորձ» աշխատությունը: Այն հատվածները, որ հասել են մեր ձեռքը, կաղմում են այդ մեծ գործի իրականացած մասի մեկ տասերորդը:

Ինչպես հայտնի է, Նալբանդյանի հետաքրքրությունների ոլորտում կենտրոնական տեղ էին զբաղում բնական գիտությունները, որոնց ուսումնասիրությանը նա հետապնդում էր ո՛չ միայն զուտ գիտական, այլև, գերազանցապես, գործնական նպատակներ, այն է՝ նպաստել ժողովրդի տնտեսական վիճակի բարվոքման գործին: Այս տեսակետից խիստ ուշագրավ են մեզ անհայտ այն երկու աշխատությունները, որոնց մասին հիշատակում են նրա կենսագիրները: Առաջինը շերամապահության ձեռնարկն է, որպիսի մի աշխատություն գրելու իր մտադրության մասին նա ակնարկել է «Սոս և Վարդիթեր»-ի «կրիտիկայում»⁴⁰:

Միք. Տեր-Գրիգորյանը 1868 թ. փետրվարի 25-ին Նալբանդյանի եղբորը՝ Գրիգորին ուղղած նամակում գրելով, որ ստացել է 'Հաղար Փարպեցու «Թղթի» թարգմանությունը և «Շերամաբուծությունը», հայտնում է իր մտադրությունը՝ տպագրել «առաջ Հաղար Փարպեցին և ապա «Շերամաբուծությունը», հեղինակի կենսագրությանը հանդերձ»⁴¹: Ինչպես երևում է, շուտով նա փոխում է իր այդ մտադրությունը և հրատարակում է Հաղար Փարպեցու «Թղթի» թարգմանությունը՝ Նալբանդյանի համառոտ կենսագրությամբ: Երա պատճառն, ամենայն հավանականությամբ, «Շերամաբուծության» անավարտ և սևագիր լինելն էր: Միք. Տեր-Գրիգորյանը Հաղար Փարպեցու «Թղթի» թարգմանությանը կցած Նալբանդյանի համառոտ կենսագրության մեջ նրա անտիպ երկերի ցանկի սկզբում հիշատակում է «Շերամաբուծություն»-ը, վերջինս բնութագրելով որպես «եվրոպական անվանի բնապատումների շարադրություններին քաղած և Հայաստանի դրության հարմարեցուցած» մի երկ: «Այս գործը,— գրում է նա,— մեր մոտն է, չէ պարզագրած և միանգամայն վերջացուցած, ուստի մենք պարզագրեցինք և մտադիր ենք, որքան կարող ենք, պակասը լրացուցանել, օգուտ քաղելով նույն հեղինակների գրվածներից, որոնց համեմատ աշխատասիրել էր հանգուցյալը: Երբ հաջողի մեզ տպել դրան, մենք կնշանակենք՝ ո՞րն է մեր ավելցուցածը»⁴²:

Միք. Տեր-Գրիգորյանը, մեզ անհայտ պատճառներով, հնարավորություն չունեցավ կատարել իր խոստումը. անհայտ է նաև այդ երկի ինքնագրի հետապահ ճակատագիրը:

³⁹ Նույն տեղում, էջ 220:

⁴⁰ Նույն տեղում, հատ. III, էջ 181:

⁴¹ Երականության և արվեստի թանգարան, Նալբանդյանի արխիվ. N° 126:

⁴² «Հաղար Փարպեցու գրած Թղթը», էջ XXII:

Նալրանդյանի բնագիտական մյուս աշխատությունը «Քիմիայի համառոտությունն» է (անավարտ), որի մասին հիշատակում է Ծ. Շահադիզը⁴³։ Այս գործը ևս ցայժմ չի հայտնաբերված։

Նամականին Նալրանդյանի գրական, հասարակական-քաղաքական գործունեության մեջ կատարել է նշանակալի դեր, եղել է, թերևս, նրա առավել նախասիրած գրական տեսակը։ Բավական է ասել, որ նրա գրական արտադրանքի մոտ կեսը (եթե ոչ ավելին) կազմում են նամակները։ Դա, անշուշտ, նաև դարաշրջանի առավել շատ տարածված գրական տեսակն էր։ Ինչպես և վերը նկատեցինք, Նալրանդյանն իր հրապարակախոսություն մի ղգալի մասին տվել է նամակների ձև։ Նամակը նրա համար եղել է ոչ միայն գաղափարակիցների հետ հաղորդակցվելու միջոց, այլև հակառակորդների դեմ պայքարելու ղենք։ Ուշագրավ է, որ նա նամակ-պամֆլետներ է գրել, հասցեագրված Մսեր Մսերյանին⁴⁴ և Խալիբյանին⁴⁵։ Նալրանդյանն իր նամակներով համախոհներին ու համակիրներին տեղյակ էր պահում իրերի վիճակի մասին, նրանց պայքարի էր կոչում հակառակորդների դեմ, մերկացնում վերջիններս խարդավանքները. «Նա յուր նամակներով ողողում էր Նախիջևանը»,— գրում է Եր. Շահադիզը⁴⁶։ «Նալրանդյանը յուր հակառակորդների դեմ սովորություն ուներ և նամակաձև թղթեր տարածել ժողովրդի մեջ...»,— հավաստում է նույն հեղինակը⁴⁷։ Սարգիս եպ. Ջալալյանը Կովկասի փոխարքայի գլխավոր վարչությանն ուղարկած ղեկուցագրում հիշում էր Նալրանդյանի՝ իր դեմ գրած մասնավոր նամակների մասին։ Դրանք, ցավոք, չեն պահպանվել, ինչպես և անհայտ են մնում շուրջ 600 նամակներ և պաշտոնական գրություններ, որոնք մի քանի անգամ գերակշռում են պահպանվածը։

Այդ նամակները, գրեթե ամբողջությամբ, գրված են 1859—1866 թվականներին, այն է՝ մեծ հրապարակախոսի կյանքի ու գործունեության «փոթորկի և գրոհի» ժամանակաշրջանում։ Բաղմաղան է Նալրանդյանի ավելի քան հարյուր նամակագիր-թղթակիցների կազմը. այստեղ են նրա հարաղատները, նոր Նախիջևանի բարեկամներն ու համախոհները, Մոսկվայի և Պետերբուրգի համալսարանի հայ և ռուս ընկերներն ու ծանոթները, «Հյուսիսափայլ»-ի աշխատակիցներն ու նրանց համակիրները, ժամանակի ազգային-եկեղեցական լիբերալ գործիչները, արևմտահայ ղեմակրատիայի ներկայացուցիչները, ազատագրական պայքարում նրա գաղափարակից-ղինակիցները... Նրանցից շատերի մասին մեր ունեցած տեղեկությունները խիստ սահմանափակ են և կամ՝ այդպիսիք գրեթե իսպառ բացակայում են։

Նալրանդյանի թղթակիցների մեջ շատ են այնպիսիները (մեծ մասամբ՝ գրական-հասարակական գործիչներ), որոնց հասցեագրված ոչ մի նամակ չի հայտնաբերվել և կամ բաղմաթիվ նամակներից հայտնաբերվել են մեկերկուսը կամ մի քանիսը. այսպես, օրինակ, Նալարյանին գրած 25 նամակից չի պահպանվել ոչ մեկը, Հ. Սվաճյանին գրած 20 նամակից հայտնի է 1-ը, Մ. Բուդաղյանին՝ 8-ից ոչ մեկը, Ան. Սուլթանշահին՝ 16-ից 5-ը, Հովհ. Բերբերյանին՝ 14-ից ոչ մեկը, Ճ. Արամյանին՝ 7-ից ոչ մեկը, Մ. Միանսարյա-

43 Եր. Շահադիզ, Միքայել Ղազարյան Նալրանդյանց, էջ 126։

44 Մատենադարան, Մսերյանների արխիվ, թղթ. 207, վավ. 1972։

45 Մ. Նալրանդյան, նրկերի լիակատար ժողովածու, հատ. IV, էջ 247—248։

46 Եր. Շահադիզ, Միքայել Ղազարյան Նալրանդյան, էջ 69։

47 Նույն տեղում, էջ 72։

նին՝ 6-ից ոչ մեկը, Կ. Հայրապետյանին՝ 65-ից 16-ը, Ղ. Խաֆաֆյանին՝ 26-ից ոչ մեկը, բանտում գրած 117 նամակից՝ միայն 22-ը...

Այս տվյալները առավել ակնառու և հրամայական են դարձնում Նալրանդյանի անհայտ երկերի և նամակների հայտնաբերման ուղղությամբ լուրջ և տևական աշխատանք ծավալելու խնդիրը:

* * *

Գրեթե ոչ մի ստեղծագործող չի սպառում իրեն. նա իրականացնում է իր մտահղացումների միայն մի մասը, մանավանդ Նալրանդյանի նման մի գործիչ, որի կյանքը բռնի և վաղաժամ ընդհատվեց:

Նալրանդյանի անկատար մտահղացումները բաղմաղան են և վերաբերում են նրա դրական ժառանգության գրեթե բոլոր մարդերին:

Այստեղ ևս գերակշռողը հրապարակախոսությունն է, որ Նալրանդյանի, որպես դրական գործիչ, տարերքն է կաղմում:

Իր առաջին հրապարակախոսական գործերից մեկում («Հիսուսյանք») նա խոստանում է «մի այլ ժամանակ» տպել Ալեքսանդր Առաջինի հրովարտակր հիսուսյաններին Պետերբուրգից և Մոսկվայից արտաքսելու վերաբերյալ և վերստին խոսել նրանց մասին, «սկսած Պիոսի ձեռքով նորանց կարգի վերականգնելուց մինչև մեր օրերը»⁴⁸:

Իր գործունեության բոլոր շրջաններում Նալրանդյանն առաջնային է համարել պայքարը քաղաքական հակառակորդների դեմ: Պետրուպոլիսյան բերդում սկսելով «Մեր լեզվի արմատական բարեփոխության փորձ» աշխատությունը, նա խոստանում է մինչև չավարտի այդ գործը, ոչ մի տեղ չգրի, սակայն անմիջապես էլ հարակցում է. «Բացի, իհարկե, քննադատությունից և ինձ վրա եղած հարձակումների պատասխաններից, որոնց ես դեռ չեմ պատասխանել: Ես պարտքի տակ եմ»⁴⁹:

1858, 1861, 1862 թթ. երկերում և նամակներում նա հայտնում է իր մտադրության մասին՝ գրելու «հին հեղինակի անունով փառավորվելու» ձրգտող գրաբարամուլներին⁵⁰, հնդկահայ կտակների գործում Գ. Վ. Ալվազովսկու և նրա արբանյակների դավադրություններին⁵¹, Սպահանի և Հնդկաստանի թեմակալ առաջնորդի բռնությունների և շահատակությունների⁵² դեմ, շարունակել Բեզադեի մերկացումները⁵³:

Նալրանդյանի մտահղացումներում ղգալի տեղ են բռնում ժամանակի պարբերական հրատարակությունները, որոնց ուղղությանը և արժարժած խնդիրներին նա հաճախ է անդրադարձել իր հրապարակախոսական գործունեության ընթացքում:

1858 թ. սեպտեմբերի 1-ին Դր. Սալթիկյանին հասցեագրած նամակում Նալրանդյանը հայտնում է, որ «այս օրերս մեր օրագիրը մի երկու խոսք խոսելու է «Մասյաց աղավնու վերա...»: Անշուշտ, նա մտադիր է եղել այդ հոգվածում քննադատության կրակի տակ առնել իր գաղափարական հակա-

48 Մ. Նալրանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 11, էջ 141:

49 Նույն տեղում, հատ. 1V, էջ 190:

50 Նույն տեղում, հատ. 11, էջ 411:

51 Նույն տեղում, հատ. 1V, էջ 116:

52 Նույն տեղում, էջ 121:

53 Նույն տեղում, էջ 179:

ռակորդի օրգանը, ուստի և նախիջևանի իր բարեկամի ուշադրությունն է հրավիրում, որ նա կարդա և կարդացածը հասկացնի ուրիշներին ևս, որ «ճրշմարտությունը հայտնվի»⁵⁴:

Ժամանակի պարբերական մամուլի քննությունը, սովորաբար, նախանշյալներ նվիրում էր «Հիշատակարան»-ի էջերը: Ահա ինչու, Մոցառետորի մեջ «Երեկո» ծրագրային նշումներում, որ, անտարակույս, Կոմս էմմանուելի «Հիշատակարան»-ի 1860 թ. գլուխներից մեկ-երկուսի նախագիծն է, զգալի տեղ է հատկացված պարբերական հրատարակություններին. «Արևմուտք» օրագիրը, նորա վախճանը.— «Մասիսը», Միսաքյանի հոդվածները»,— «Մասյաց աղավնի կամ Միածան»,— «Կոունկ Հայոց աշխարհին».— «Արամյանի հայտարարությունը «Արևմուտքի» մասին».— «Փարիզ» անուն հանդեսը Մուրադյանցի»⁵⁵: Նույն տեղում նախանշյալներ նախատեսել էր մի բնդհանուր տեսություն ժամանակակից հայ մամուլի մասին («Օրագիրների ներկա վիճակը: Նոցա ինչպես լինելու պարտականությունը»): Ուշագրավ է, որ Մտ. Ոսկանի «Արևմուտք»-ի մասին խոստացել էր «մի առանձին հոդվածով մասնավորապես խոսել» դեռևս «Հյուսիսափայլ»-ի 1859 թ. սեպտեմբերի ամսատետրակի «Հիշատակարան»-ում և կրկնել էր իր խոստումը նոյեմբերի ամսատետրակում⁵⁶:

«Երեկո»-ում նախատեսվում էր Բ. Վ. Այվազովսկու «Վարդապետարանի» և 1860 թ. օրացույցի քննությունը: «Թիֆլիսից ստացված անստորագիր համակները Հովնաթանյանի մասին» ծրագրային նշումը հիմք է տալիս ևն թաղրելու, որ նախանշյալներ նոր երանգներով մտադիր էր հարստացնել հայ առևտրական բուրժուազիայի ներկայացուցչի այդ գունեղ կերպարը: Առավել շնտաքքրական ևն վերջին երկու նշումները. «XVIII դարու վերջին կեսի վրա մի խորհրդածություն, ակնարկելով 89 անմահ թվականը».— «Ռուս կայսերների հրովարտականը: Սովորովի նամակը և այլն և այլն: Ակտերի երկրորդ հատոր, երևա 68»: Նախանշյալն նշած «Ակտեր»-ի երկրորդ հատորի 68—70 էջերում տպագրված է Հովհ. Լադարյանի հիշատակագիրը Ա. Վ. Սովորովին՝ պարսկական և թուրքական լծից Հայաստանն ազատագրելու մասին: Այլ տվյալներ չունենալով, դժվար է կոահել, թե նախանշյալն ինչ առիթով էր անդրադառնալու ֆրանսիական մեծ հեղափոխությանը և հայ ազատագրական շարժման պատմության հիշյալ կարևոր վավերագրին, և վերջինս ինչպես էր մեկնաբանվելու նրա «Հիշատակարան»-ում:

«Երեկո»-ում նշված հարցերից միայն երկուսին (սեռագրաշյանի գիրքը, «Թուրքիայում հայոց և հունաց պատրիարքների, եպիսկոպոսների և վարդապետների արած անդադար տեսությունը») անդրադարձավ նախանշյալներ «Հյուսիսափայլ»-ի 1860 թ. վեցերորդ ամսատետրակում տպագրված «Հիշատակարան»-ի վերջին գլխում: Հնդկաստանի ուղեորությունը և հետաքուստը իրադարձությունները նրան հնարավորություն չտվին շարունակելու «Հիշատակարան»-ը, իրականացնելու վերը հիշված մտահղացումները:

«Հյուսիսափայլ»-ի խմբագրի և նրա գլխավոր աշխատակցի փոխհարարերության տեսակետից կարևոր է նախանշյալնի մտադրությունը՝ գրախո-

⁵⁴ Նույն տեղում, էջ 51:

⁵⁵ Նույն տեղում, հատ. IV, էջ 275:

⁵⁶ Նույն տեղում, հատ. I, էջ 439—452:

սելու «Հանդես նոր Հայախոսության» ժողովածուի երկրորդ դիրքը. «Քաղցր պարտականություն կհամարենք մեզ «Հյուսիսափայլ»-ի դալոց ամսատետրականներից մինի մեջ խոսել այս պատվական աշխատության երկրորդ, ավելի ճոխ հատորի վերա»⁵⁷:

Նա ծրագրել էր դրախոսել նաև «Հայկադյան բառարան»-ը, գտնելով, որ այն «շատ և մեծ սրբագրությանց կարոտ է ընդհանրապես»⁵⁸:

Նալբանդյանի ստեղծագործական մտահղացումներում հանդիպում ենք կարևորագույն նշանակություն ունեցող տեսական-փիլիսոփայական խնդիրների, որոնց նա ցանկացել է վերադառնալ, ավելի խոր ու համակողմանի քննելու համար:

Դրանցից առաջինը ազգային հարցն է, որի հեզափոխական-դեմոկրատական մշակումը նրա մեծագույն ծառայություններից մեկն է:

«Եթե մինչև այժմ մեր խոսածներից հասկացավ մեր նեղսիրտ ընթերցողը ազգության վերա մեր ունեցած գաղափարը,—գրում է նա «Երկրագործության» մեջ,— եթե համոզվեցա՞վ կամ գոհացավ, մեք մեր շնորհակալությունը կանխիկ հայտնում ենք նորան: Իսկ ընդհակառակը, եթե ավելի նեղսրտեցավ, չենք վհատում: Մեք, ուրիշ անգամ, դարձյալ կխոսենք նորա հետ այս խնդիրների վերա, և մեր ամեն ճիգը կթափենք ավելի մշակել և ավելի կերպարանագործել մեր գաղափարը»⁵⁹:

«Երկրագործության» մի այլ էջում ընդգծելով, որ պետություն և ազգություն չպետք է նույնացնել, որ դրանք տարբեր հասկացություններ են, Նալբանդյանը խոստանում է հետագայում վերադառնալ պետության հարցին. «...Հարկավոր է իմանալ,—գրում է նա,—որ տերությունքը ազգ չեն և տերությանց շահը ազգի շահի հետ բնավ վերաբերություն չունի, քանի որ տերությանց կազմությունը այնպես է, ինչպես որ կան այսօր: Թե ի՞նչ է տերությունը, այդ մասին մի ուրիշ ժամանակ»⁶⁰(ընդգծումը իմն է—Ա. Ի.):

Իր աշխատության «Բուն խնդիրը» համարելով «մեր խեղճ ազգի թշվառությունը», և ընթերցողի ուշադրությունը հրավիրելով «դեպի Թուրքիա, որի կազմության մեջ մտնում է Հայաստանի և հայոց ազգի մեծագույն մասը», Նալբանդյանը նկատում է, որ «բայց և այնտեղ տնտեսական խնդրի սահմանից չէ պիտո դուրս գանք այս անգամ»⁶¹: Նալբանդյանի ընդգծած վերջին բառերը ցույց են տալիս, որ նա մտադիր է եղել հետագայում անդրադառնալու նաև Թուրքիայի քաղաքական վիճակին և դրան առնչակից խնդիրներին:

Ազգության և պետության հարցերը, առավել կամ նվազ չափով, անշուշտ, պիտի արծարծվեին նաև նրա երկու այլ հոդվածներում, որ, ինչպես երևում է բանտի նամակներից, խոստանում էր գրել: Դրանցից մեկը Լ. Ֆոշեի «Անդլիայի ակնարկներ» գրքի գրախոսությունն է, մյուսը՝ հրեական հարցի ուսումնասիրությունը⁶²: Ժողովրդի տնտեսական վիճակի բարվոքման խնդրի կարևորության գաղափարն արտացոլված է նաև Նալբանդյանի մտահղա-

57 Նույն տեղում, հատ. 11, էջ 149:

58 Նույն տեղում, հատ. 111, էջ 172:

59 Նույն տեղում, էջ 92—93:

60 Նույն տեղում, էջ 45:

61 Նույն տեղում, էջ 65:

62 Նույն տեղում, հատ. IV, էջ 153 և 165:

ցումներում: «Ոոս և Վարդիթեր»-ի «կրիտիկայում» ընդգծելով, որ գյուղացիների փոխադարձ օգնությունը («փոխարա գնալը») «մեծ խորհուրդ ունի ընկերական կյանքում», նա հայտնում է իր մտադրությունը դրան անդրադառնալ «մի ուրիշ, ավելի հարմար ժամանակ»⁶³:

Պետրուպավլովյան բանտում նա ծրագրում է «Արարատյան դաշտի հայ շինականների բարրառով մի փոքրիկ բրոշյուր հրատարակել և սովորեցնել նրանց, թե ինչպես պետք է աճեցնել և ժողովել որդան կարմիրը. իսկ դա կարևոր բան է այնտեղի աղքատ շինականների համար»⁶⁴:

Մեծ մտածողի գիտական լայն հետաքրքրությունների մասին են վկայում նրա ծրագրերը՝ զբաղվելու կենդանարանության, բուսաբանության, սաղմնաբանության (էմբրիոլոգիա) ուսումնասիրությամբ⁶⁵, նրա մտադրությունը՝ գրելու գիսավոր աստղերի մասին⁶⁶, արժարժեքի «Արագածի վուլկանականության խնդիրը»⁶⁷:

Առանձին ուշադրության է արժանի նալրանգյանի մտահղացումների և ծրագրերի այն մասը, որ վերաբերում է հայագիտությանը:

Հայոց պատմության ուսումնասիրության այն աստիճանը, որի վրա գտնվում էր հայագիտության կարևորագույն այդ բնագավառը, նրան չէր գոհացնում: Ժամանակի քաղաքական և սոցիալական հարցերում ճիշտ կողմնորոշվելու տեսակետից նա էական նշանակություն էր տալիս հայ ժողովրդի պատմության գիտական ուսումնասիրությանը և ուսուցմանը. «Մեր ազգությունը դորացնելու և ազգության զաղափարը հասարակաց դարձնելու համար ամենամեծ և դժարվոր հնարներից մինն է նաև ազգային պատմության ուսումը»: Այս տողերի շարունակության մեջ նա ցավով էր արձանագրում, որ «Մինչև այժմ մեր ազգը չունի մի օրինավոր պատմություն, մի այնպիսի գործ, որ արժանի լիներ և դիմանար եվրոպական քննության հրափորձությանը»⁶⁸: Նա խիստ քաջաստար է արտահայտվում ժամանակի հանրագիտարաններից մեկում տպագրված Քերովրե Պատկանյանի «Հայոց պատմություն» հոդվածի մասին. «Եթե բանտարկված չլինեի,—գրում է նա 1863 թ. փետրվարի 14-ի նամակում,—աշխարհի և ոչ մի բարիքի համար էժան չէի նստեցնիլ պ. Պատկանյանին նրա՝ հայոց պատմության վերաբերյալ գրած հոդվածը»⁶⁹:

Դեռևս 1859 թ. «Մեռելահարցուկ»-ում արժարժեքով հայոց պատմության «քաղաքական և հոգեբանական կողմերը» քննելու խնդիրը, նա գրում է. «...Իմ մտքերը կերպարանագործելու և այս մասին երկար խոսելու համար հարկավոր է ժամանակ... մանավանդ այստեղ հարմար չէր երկարարանել... պուցե ավելորդ ևս խոսեցի...»⁷⁰: Ակնարկը, հարկավ, վերաբերում է քաղաքական հանգամանքներին, զրաքննության խստություններին:

Հայոց պատմության ուսումնասիրությունը նա ձգտում էր դնել գիտական լուրջ հիմքերի վրա: Ղեկավարվելով այն ճշմարտությամբ, որ «...Պատմու-

⁶³ Նույն տեղում, հատ. III, էջ 183:

⁶⁴ Նույն տեղում, հատ. IV, էջ 215:

⁶⁵ Նույն տեղում, էջ 150, 214:

⁶⁶ Նույն տեղում, հատ. II, էջ 247:

⁶⁷ Նույն տեղում, հատ. III, էջ 147:

⁶⁸ Նույն տեղում, հատ. I, էջ 463:

⁶⁹ Նույն տեղում, հատ. IV, էջ 142:

⁷⁰ Նույն տեղում, հատ. I, էջ 281—282:

թյունը առանց աշխարհագրության անհասկանալի է, և աշխարհագրությունը առանց ուժեղ և ճիշտ քարտերի, գրեթե անուսանելի», նա 1861 թ. ապրիլին փարիզում պատվիրում է Փոքր Ասիայի քարտեզը⁷¹, իսկ 1862 թ. հունիսին Պետերբուրգում, արտասահմանյան ուղևորությունից վերադառնալուց անմիջապես հետո, կազմում և ձեռնարկում է տպագրելու պատմական Հայաստանի՝ գունատիպ քարտեզը⁷²։ Վերջինս նրա շատ գեղեցիկ այլ մտահղացումների նման մնաց անկատար, իսկ Փոքր Ասիայի քարտեզի նրա պատվերը կատարվեց, թե՛ ոչ՝ մեղ անհայտ է։

Հայոց պատմության ուսումնասիրությանը և ուսուցմանը նպաստելու նպատակով, 1858 թ. ծրագրում է հրատարակել հորենացու, Եղիշեի, Ղազար Փարպեցու և մեր մյուս պատմիչների երկերը՝ «ժողովրդական կենդանի և հասկանալի լեզվով...»⁷³։ Ինչպես հայտնի է, իր այս մտահղացումներից նա հնարավորություն ունեցավ իրականացնելու միայն Ղազար Փարպեցու «Թղթի» աշխարհաբար թարգմանությունը, հանդերձ ծանոթագրություններով, ուր կրկին հայտնում է իր մտադրությունը նույն հեղինակի «Պատմության» աշխարհաբար թարգմանությունը հրատարակելու մասին⁷⁴։

Պատմիչների տեքստերի հրատարակությունը, թեկուզ աշխարհաբար թարգմանությամբ, նա պահանջում էր անցկացնել «կրիտիկայի կրակով», Վճռականորեն մերժելով դրանց «հում ու խակ» տպագրության պրակտիկան։ Ավելի ուշ անդրադառնալով այդ խնդրին, նա գրում է. «Ձեռագիրների տպագրությունը պետք է որ լինի քանի մի օրինակների համեմատությամբ, և բնավ ներելի չէ ընտրել կամ ուղիղ կարծել այն օրինակը, որ մանավանդ ձեռնտու էր տպողի բանին։ Եվ նույն գործի դանաղան օրինակների ճշմարտությունը պետք է ստուգել, համեմատելով ուրիշ գրքերի հետ և մանավանդ այնպիսիների, որ կարող էին աղբյուր եղած լինել գործի հեղինակին»⁷⁵։

Հայոց պատմության և հայ ժողովրդի մշակույթի դիտական ուսումնասիրության համար Նալբանդյանը նախագծել էր շատ ընդարձակ մի ծրագիր, որ առաջադրել է «Կոմս էմմանուելի հիշատակարանի» նախավերջին գլխում, 1860 թ.։

Այդ ծրագրում նա նախատեսում էր հրատարակել «Վանքերի կամ այս ու այն մատենադարանի անկյուններում» փտող ձեռագրերը՝ դրանց կորստից փրկելու համար, ինչպես և «հավաքել և տպել» ձեռագիր մատյանների հիշատակարանները, «որ շատ անգամ,—գրում է Նալբանդյանը, ընդգծելով վերջինների նշանակությունը,—կարող են վկա լինել ժամանակագրության մի երևելի անցքի, որ անցել էր ազգի մեջ և որի թվականը գուցե թե կորած էր կամ ճիշտ չէր»։ Նա անհրաժեշտ էր համարում որոնել և գտնել նաև այն գործերը, որոնք կորած լինելով, անունով են միայն հայտնի։ Նալբանդյանի ծրագրում նախատեսված էին նաև հնագիտական պեղումները և դրանց արդյունքների հրապարակումը։

Այս ամենը գլուխ բերելու համար Նալբանդյանն առաջարկում էր հիմնել «Հայոց պատմության և հնության ընկերություն»։ Ուշագրավ է, որ վերջինիս

71 Գրականության և արվեստի թանգարան, Նալբանդյանի ֆ., 123-178։

72 Մ. Նալբանդյան, Ծրկերի լիակատար ժողովածու, հատ. II, էջ 390—394։

73 Նույն տեղում, էջ 260։

74 Նույն տեղում, հատ. III, էջ 249, 260։

75 Նույն տեղում, էջ 224։

«բոլոր ուսումնական անդամների հաճությամբ և հավանությամբ ընդունված և քննության դիմացած» պատմությունը միայն կարող էր տպագրվել: Ընկերությունը, այսպիսով, լինելու էր դիտական հեղինակավոր այն կաճառը և ատյանը միաժամանակ, որը պետք է ուսումնասիրեր, մշակեր հայոց պատմության ու հնագիտության խնդիրները և կասեցներ պատահական, ոչ գիտական գրքերի հրատարակությունը:

Այսքան զեղեցիկ են եղել նալբանդյանի մտահղացումները, նրա ելուղանքները: Իսահակյանը մի առիթով ասել է, թե՝ մարդ բնութագրվում է ոչ միայն իր կատարած գործերով, այլև իր իղձերով, երազանքներով, այն ամենով, ինչի՞ ձգտել է հասնել, ի՞նչը համարել է իր կյանքի խորհուրդը...

Ինչպես իր ստեղծագործությամբ և գործունեությամբ, այնպես էլ իր մտահղացումներով, որոնց իրականացմանը խանգարեցին փոթորկալի կյանքի հանգամանքները և դաժան ժամանակը, նալբանդյանը բնութագրվում է որպես մեր ժողովրդի քաղաքական ու սոցիալական ազատագրության և մտավոր վերածնության անձնվեր մարտիկն ու ռահվիրան:

НЕИЗВЕСТНЫЕ ПРОИЗВЕДЕНИЯ И НЕЗАВЕРШЕННЫЕ ЗАМЫСЛЫ М. НАЛБАНДЯНА

А. М. ИНДЖИКЯН

(Р е з ю м е)

Часть произведений великого армянского революционного демократа М. Налбандяна не дошла до нас, многие его творческие замыслы не были завершены. Причиной этому были преследования царской цензуры, аресты, ссылка и преждевременная смерть Налбандяна.

Автор статьи на основании архивных документов показывает, какие именно произведения Налбандяна были утеряны и при каких обстоятельствах, каковы были его творческие замыслы. Новые данные обогащают наше представление о круге научных и художественных интересов выдающегося мыслителя и в определенной мере способствуют выявлению не дошедших до нас произведений Налбандяна.